ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք. Մարտունի, Եռահատյան 2,

Հեռ. 060-74-34-01

№ 803

09 նոյեմբեր 2020 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼ ՊԱՐՈՆ Ն.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան.

<< Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներից ելնելով ,ուղարկվում են Մարտունի համայնի ղեկավարի կողմից 02.11.2020 -06.11.2020թ. ընդունված որոշումները :

Առդիր՝ 4 թերթ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կատարող՝ Ռ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 294-Ա

02 նոյեմբերի 2020 թվական

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՌՈՒԲԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Սույն թվականի նոյեմբերի 2-
ից լուծել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի
պետի ժամանակավոր պաշտոնակատար Ռուբիկ Հովիկի Սահակյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
2.Համայնքային աշխատանքային ֆինանսների կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնի պետի պարտականությունների կատարումը դնել նույն բաժնի գլխավոր մասնագետ Աշխեն Քոլոզյանի վրա :
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

02 նոյեմբերի 2020 թվական

Ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 295-Ա

02 նոյեմբերի 2020 թվական

ՌՈՒԲԻԿ ՀՈՎԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 1.2-1) ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի գրությունը, Ռուբիկ Հովիկի Սահակյանի դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 13.07.2006 թվականի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը հաստատելու մասին »թիվ 1002-Ն որոշման , «Համայնքային ծառայության մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր՝ 1.2-1) ժամանակավոր թափուր պաշտոնում սույն թվականի նոյեմբերի 2-ից աշխատանքի ընդունել Ռուբիկ Հովիկի Սահակյանին և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր մինչև տվյալ թափուր պաշտոնի մրցույթում հաղթող ճանաչված անձին աշխատանքի ընդունելը:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսների կառավարման և եկամուտների հավաքագրման բաժնին՝ աշխատավարձը վճարել համաձայն հաստատված հատիկացուցակի:

3. 2020 թվականի նեյեմբերի 2-ից դադարեցնել Հակոբ Մնացականյանի կողմից համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պարտականությունների կատարումը:

4. Հանձնարարել Հակոբ Մնացականյանին կատարել փաստաթղթերի հանձնարնդունելություն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

02 նոյեմբերի 2020 թվական

Ք.Մարտունի